



Շրանչանի Խանձնո՞վ Աճեմյանի հայոց հայապալենին

**ՏՆՆԱԽԱԳԱՏ ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԹԵՄԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ՝ ՎԵՏԱՓԱՌ-ՆԱՅԻՐԱԳԵՏԻՆ
Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ ՏԱՆՁՆԵԼՈՒ ԿՈՒԹՈՎ**

«Վեհափա՛ռ Տեր, Սրբազա՛ն հայրեր, սիրելի՛ հայրենակիցներ,

Ողջունում ենք թեմական ժողովի բոլոր մասնակիցներին և հաջողություն մաղթում Վաթեղական Սուրբ Եկեղեցու այն բոլոր քայլերին ու ձեռնարկներին, որոնք ուղղված են մեր երկրի ու հայության հոգեւոր կարիքների բավարարմանը: Այս լսարանի առաջ ավելորդ եմ համարում խոսել մեր Եկեղեցու պարամական անփոխարինելի դերի ու նշանակության մասին: Դրանք ինքնին հասկանալի են: Ինձ համար ներկա փուլում կարեւոր են հարկապես Եկեղեցի-պետություն հարաբերությունները, չնայած դեպի Վաթեղեցին ունեցած մեր ակնածալից վերաբերմունքին և իմ ջերմ հարաբերություններին Վեհափառ Վայրապետի հեղձ խոսքովանենք, որ Եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորումը հեշտ խնդիր չէ: Եկեղեցին չպետք է միջամտի պետության գործերին, և պետությունը չպետք է միջամտի Եկեղեցու գործերին: Այս պարզ բանաձեռն դժվար է կիրառել կյանքում, որովհետեւ մեր՝ հայերիս դեպքում գրեթե անհնար է զափոռոշել այն սահմանը, թե որպե՛ղ է ավարտվում մեր հոգեւոր մշակույթը և որպե՛ղ է սկսվում աշխարհի՝ մասնավորապես քաղաքական մշակույթը: Կարծում եմ, որ այսօր մենք մոտ ենք ոսկե միջինին, և դրա հիմքում նաեւ Վեհափառ Վայրապետի իմաստուն ու սկզբունքային կեցվածքն է: Այս ասպարեզում, իհարկե, ժամանակը կանի իր անխուսափելի սրբագրումները, բայց, ըստ էության, մենք ճիշտ ճանապարհի վրա ենք: Պետական կառույցները պարարտաբար են շարունակելու և խորացնելու այս համագործակցությունը, որ արդեն իսկ փալիս է իր դրական արդյունքները: Ինձ համար շարժանկ է այն անաղմուկ, բայց մեծ աշխատանքը, որ այսօր Վաթեղեցին իրականացնում է մեր մարտղ սերնդի հոգեւոր և գեղագիտական դաստիարակության ոլորտում: Վայրոյաց քրները և Եկեղեցու հովանու ներքո գործող նման կառույցները գեղեցիկ ու օգտակար կերպով լրացնում են այն բացը, որ կարող է լինել ընտանիք, դպրոց և այլն: Դրանց առաջին բարի պարտւղները մենք տեսնում ենք արդեն այսօր, բայց իրական մեծ հունձքը տեսնելու ենք վաղը. դա վաղվա Վայաստանի բարոյական և կրթական նկարագիրն է: Բարոյական Վայաստան նշանակում է ուժեղ Վայաստան, կիրթ Վայաստան նշանակում է ուժեղ Վայաստան: Ահա թե ինչու՝ սա ռազմավարական խնդիր է, և կարծում եմ, որ այստեղ մեր Եկեղեցին պետք է ավելացնի իր ջանքերը՝ իր թեւերի փակ առնելու ավելի ու ավելի շարժանուկների: Սա այն անդաստանն է, որտեղ ինչ էլ անենք, ինչքան էլ անենք, քիչ է, բավարար չէ: Յուրաքանչյուր հայ քաղաքական գործչի, առավել եւս Վանրապետության նախագահի համար բացառիկ կարեւոր է Վաթեղեցու գործունեության սկզբունքը. դա հայությանը միավորող ամենահուսալի շաղախն է: Միասնական արմաքների, միասնական նպատակների, ընդհանուր մարտահրավերների և մանավանդ ընդհանուր ապագայի մասին Եկեղեցու պարզամն ու հորդորը նոր ոգի են հաղորդում արարերկրի մեր քույրերին ու եղբայրներին և կարողանում են թեւավորել նույնիսկ հուսահարվածներին: Ողջ հայության միասնական կեցվածքը ոչ միայն հոգեւոր, այլեւ քաղաքական մեծ կապիքալ է: Անթույաքրելի է այդ

կապիտալը մսխել ոչ սկզբունքային հարցերի շուրջ ծագած վեճերում: Մեր հայրենաբնակ հավաքավոր ժողովուրդը վկան է անկախության փարիներից սկսված ուրախալի գործընթացի: Զանափրոջամբ վերականգնվում ու վերածվում են մեր խոնարհված եկեղեցիներն ու մատուռները, կառուցվում եւ օժվում են նորերը: Թեմական ու համայնքային կյանքը նոր փուլ է մտնում «համայնք» բառի հոգեւոր իմաստով: Այս երեսույթը մեր ներքին կյանքի եւ ինքնակերպ կազմակերպման կարեւոր բաղադրիչն է, որին, կարծում եմ, մոտ ապագայում ավելի մեծ դեր է վերապահված:

Մեզ համար պակաս կարեւոր չէ Հայ Եկեղեցու միջազգային խաղաղասիրական գործունեությունը: Խաղաղության քարոզ չի նշանակում ժողովրդին ահաբեկել պատերազմի ուրվականով: Պատերազմների բովով անցած եւ դրանց ողջ գրկանքները կրած մեր ժողովուրդը դրա կարիքը չունի: Կարծում եմ, որ Հայ Եկեղեցին այս ասպարեզում ճշգրիտ դիրքորոշում ունի եւ աշխատում է արդյունավետ: Մենք բարձր ենք գնահատում մեր Եկեղեցու եռանդուն մասնակցությունը համաշխարհային էկոմենիկ շարժմանը: Սրա նպատակն է, ինչպես հոգեւորականներն են ձեռակերպում, սրելով նոր աշխարհ, ամրացնել քրիստոնեական սերը եւ եղբայրությունը: Վստահ ենք՝ նմանօրինակ ջանքերն անշեղորեն բարձրացնում են Հայ Եկեղեցու միջազգային վարկն ու հեղինակությունը, նաեւ հայության եւ Հայսփանի միջազգային ներգրավվածությունն ու դերը:

Ես չեի ցանկանա, որ իմ խոսքից այնպիսի փալավորություն սրելով, թե ամեն ինչ հրաշալի է, եւ մենք այլեւս անելիք չունենք: Թե՛ առանձին-առանձին, թե՛ գործակցաբար մեր պետությունը եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաջնորդությամբ եւ Ամենայն Հայոց Հայրապետի հովվապետությամբ դեռ շատ ու շատ անելիքներ ունեն, որովհետեւ կաթարելության ձգպումը սահմաններ չի ճանաչում: Օգտվելով առիթից՝ ուզում եմ իմ սրբի խոսքն ասել Վեհափառ Հայրապետի գահակալության փաստանյալի կապակցությամբ, որ լրացավ օրերս, խոսել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արժանավոր Գահակալի մասին, որ դարձավ մեր երկրի ու Եկեղեցու սրբազան ավանդույթների շարունակողն ու զարգացնողը՝ միաժամանակ իրեն դրսևորելով որպես ժամանակակից գործիչ եւ 21-րդ դարի մարմող: Ինձ համար շատ դժվար է գնահատել Հայաստանի եւ հայության հոգեւոր պետի գործունեությունը. ես նման հավակնություն չունեմ: Որպես կանոն կարողիկոսների վարքն ամենաճշգրիտ կերպով գնահատում է պարմությունը: Այսօր ես պարզապես խոսք եմ ուղղում Վեհափառ Հայրապետին եւ իմ նրախարագիությունը հայրնում նրան այն մեծ գործի համար, որ արվեց մեկ մարդու կողմից ընդամենը մեկ փաստանյալի ընթացքում:

Վեհափառ Տեր, մաղթում եմ Ձեզ արգասաբեր գործունեության նորանոր փաստանյալներ: Սուրբ Գրիգոր Լուսավորչի գավազանով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Դուք դեռ երկար եք հովվելու Ձեր հոգեւոր հոփը: Հավատում եմ, որ վկան ենք լինելու Հայաստանի եւ հայության նոր նվաճումների, որոնց ձեռքբերման մեջ լինելու է նաեւ ձեր ծանրակշիռ ավանդը:

Սրբազան հայրեր, սիրելի՛ հայրենակիցներ, ես հպարտորեն հիմանադիր եմ սպորազրել Վեհափառ Հայրապետին պարգևատրելու Հայաստանի Հանրապետության բարձրագույն շքանշանով: Թույլ տվեք այդ շքանշանը հանձնել ձեր ներկայությամբ»: